

**ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ-ԼԵՎՈՆ ՉԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.
ՄԵՐՏ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՐՁ ԲԱԺԱՆՈՒՄ**

Բանալի բաներ – Վահան Թեքեյան, Չավեն Սյուրմեյյան, նամակագրություն, Հայաստան, Միացյալ Նահանգներ, որբություն, ազգային գործունեություն, հոգևոր հայր, բաժանում, զոհողություն, ազնվական ասպետ, հիվանդություն, սիյոնոք, ճանաչողական արժեք

ՄՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քիչ չեն այն դեպքերը, երբ ժամանակն ու տարածությունը վճռական ազդեցություն են ունենում մարդկային հարաբերությունների վրա: Այդպիսի իրողություններից է հայ երկու գրողների՝ Վահան Թեքեյանի և Լևոն Չավեն Սյուրմեյյանի կյանքում տեղի ունեցած բարեկամության ու անջատման պատմությունը, երբ ժամանակը ունեցել է բարեբեր նշանակություն՝ առթելով ծանոթություն, մարդկային ջերմ փոխհարաբերություններ և փոխհոգածություն, իսկ տարածությունը բացասաբար է ազդել այդ հարաբերությունների ընթացքի վրա և տեղիք տվել անդարձ բաժանման:

1914 թ. Վ. Թեքեյանը Կ. Պոլսում հրատարակել էր իր «Հրաշալի հարություն» ժողովածուն, երբ նույն թվականի հուլիսի 28-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմը նրան ազգային ու կուսակցական գործունեության նոր ոլորտներ մղեց: Նույն թվականի օգոստոսին նա թողնում է Երուսաղեմի, որն այդ ժամանակ Թուրքիայի տիրապետության տակ էր, Ս. Հակոբ վանքում Կ. Պոլսի Ազգային ժողովի ներկայացուցչի իր պաշտոնը և հեռանում Եգիպտոս: Ալեքսանդրիայում 1915 թ. նա հիմնում է «Արեւ» թերթը, ակտիվորեն մասնակցում հայ գաղթականների ու որբերի օգնության և հետագա կյանքի կազմակերպման աշխատանքներին, մասնակցում Կիպրոսում Հայկական լեգեոնի ձևավորմանը: 1918 թ. զինադադարը, ինչպես հայության մի մասին, Թեքեյանին ևս մեծ հույսեր է ներշնչում: 1919 թ. նա մեկնում է Հայաստան: Նույն թվականին Փարիզում տպում է «Կես գիշերեն մինչև արշալույս» բանաստեղծությունների ժողովածուն՝ գրքի որոշ բանաստեղծություններում տարփողելով այդ «արշալույսը»:

1920 թ. նոյեմբերին Թեքեյանը նորից Կ. Պոլսում էր, ուր ստանձնում է «Ժողովրդի ձայնը» թերթի խմբագրապետությունը, քաջալերում նոր-նոր գրական կյանք մտնող Վազգեն Շուշանյանին, Որբունուն, Նիկողոս Սարաֆյանին, Պետրոս Չարոյանին և այլոց: 1921-1922 թթ. ուստարում նա ստանձնում է Ազգային Կեդրոնական վարժարանի ուսուցչի, ապա տեսչի պաշտոն:

նը, ուր և հանդիպում է վարժարանի աշակերտներից մեկին՝ Ջավեն Սյուրմեյանին:

Նրանց միջև անմիջապես ծնունդ է առնում փոխադարձ համակրանքը: Թեքեյանին գրավում են պատանի Սյուրմեյանի գրական հետաքրքրությունները, նրա լրջությունն ու մտավոր առկայծումները, նրա իսկ խոսքերով՝ պատանու «զգացումն ու կորովը, նրբանկատությունն ու ազնվությունը» և, ամենակարևորը, նրա՝ բանաստեղծ լինելու հայտնությունը: Ի դեմս Սյուրմեյանի՝ Թեքեյանը կարծես գտել էր իր որոնած «զուսակ»-ին, ում «տաքուկ շունչը» օգնելու էր իրեն «կեանքէն դեռ համ մը առնելու եւ բան մը յուսալու»¹: Նա հավատում է, թէ Սյուրմեյանը պիտի «մեծնա մաքրութեամբ... եւ ավելցած շնորհներով»՝ հանուն նրա բարիքի և իր սփոփանքի:

Սյուրմեյանը կորովից՝ Սյուրմեյանը գերվում է վարժարանի տեսչի լրջությամբ (ուր մասին նա հետագայում պիտի գրեր. «Թէ՛ տեսքով եւ թէ՛ զգացումով՝ Թեքեյան իրական ազնուականն էր միտքի...»²), նրա բանաստեղծական տաղանդով, մարդկային հոգատարությամբ: Թեքեյանը անցել էր կյանքի դժվարին բավիղներով, տեսել ու զգացել ինչպես կուսակցական ու հասարակական, այնպես էլ մարդկային բարոյ ու հակասական բազում ելևէջումներ՝ գաղափարական տևական կռիվներ, ազգային փլուզումներ, յուրայինների ուրացումներ, օրվա հացի խնդրի լուծման դժվարություններ, երկրից երկիր թափառումներ, ընտանեկան հարկի բացակայություն: Ճակատագիրը նրան բանաստեղծ էր կարգել, բայց չէր տվել կյանքի երջանկություն: Չէր տվել նաև կին ու երեխա ունենալու բարեբախտություն: 1914 թ. գրած «Ջավակս» բանաստեղծության մեջ նա իր դժգոհությունն է հայտնում Աստծուց. «Ջուկի մը շնորհն անգամ, ո՛վ Տէր զլացար // Ինձի ընդ միշտ...»:

Այս ամենը հանգեցրել էր նրան, որ Թեքեյանը, երբ հանդիպեց Սյուրմեյանին, արդեն քառասունն անց ամուրի էր և վաղուց ցանկանում էր երեխա ունենալ, որին իր բանաստեղծություններում անվանում էր «տղաս» կամ «զավակս»: Սյուրմեյանի անձի մեջ Թեքեյանը տեսնում ու զգում է հենց իր փնտրած այդ զավակին, ով կարիք ուներ նեցուկի ու օգնող ձեռքի, ով կարող էր մեծանալ ու իր միայնակ կյանքի հենարանը լինել, և ում ինքը կարող էր իր կյանքը տալ ու նրանից կյանք ստանալ՝ գտնելով «անոր մեջ ինքզինք» ու «կրկնուած անոր մեջ»:

Տրապիզոնում ծնված Սյուրմեյանի հայրն ու մայրը գոհ էին գնացել եղեռնին, և նա ճաշակել էր որբության բոլոր դառնություններն ու մանկության զրկանքները:

Իր կյանքի բերումով Թեքեյանը լավ գիտեր ցավաշատ մանկության պատճառած մորմոքները և մինչև Սյուրմեյանին հանդիպելը՝ 1919 թ., ար-

¹ Վահան Թեքեյանի նամակները Լեւոն-Ջուլեն Միւրմէլեանին, Նիւ Յորք, 1950, էջ 25:

² Նույն տեղում, էջ 11:

դեն գրել էր այդ առնչությամբ իր լավագույն բանաստեղծություններից մեկում.

«Ով երագուն մանկություն՝ որ մանկությունըս եղար,

Կը փափաքիմ, ոչ այլևս ըզքեզ ապրիլ վերստին»¹:

Ու երբ հանդիպեցին 16-ամյա Սյուրմելյանն ու 43-ամյա Թեքեյանը, բացի առաջինի գրական հետաքրքրությունից ու երկրորդի գրական փորձառությունից, միմյանց հասկանալու ու հարազատանալու գործում քիչ դեր չխաղաց երկուսի՝ այդ տխուր մանկությունը «ոչ այլևս» վերստին ապրելու բաղձանքը, որը Սյուրմելյանի առաջին բանաստեղծություններում արտահայտվում է որպես վիճակ ու մտածում, իսկ Թեքեյանի պոեզիայում՝ որպես ընդհանրացնող ասելիք ու բողոք:

Ճակատագրով, ինչպես և ներաշխարհով ու մտածողությամբ իրար հարազատ այս երկու հոգիների առաջին հանդիպումը տեղի է ունեցել հեռակա, երբ 1920 թ. նոյեմբերին արտասահմանից վերադարձած Թեքեյանը ձեռնարկել էր Ռամկավար ազատական կուսակցության միացումը, ընտրվել դրա նախագահ և խմբագրում էր կուսակցության օրգան «Ժողովրդի ձայնը» օրաթերթը: Սյուրմելյանը, կոտորածների պատճառով որբանալով, թափառել էր ռուսական մի շարք քաղաքներում, 1918 թ. վերադարձել Կ. Պոլիս, կարճ ժամանակով ուսանել Արմաշի գյուղատնտեսական վարժարանում*, որբ աշակերտների հետ մեկնել Հայաստան ու Կարսի անկումից և Հայաստան թուրքերի ներխուժումից հետո կրկին վերադարձել Կ. Պոլիս, ապրել տեղի Էսայան վարժարանում տեղավորված որբանոցում և մի քանի ամիս սովորել Կեդրոնականում՝ ուսուցիչներ ունենալով Հ. Օշականին, Կ. Զարյանին, Գ. Գավաֆյանին և այլոց: Այս օրերին Սյուրմելյանը Թեքեյանի հրատարակած թերթում տպագրում է իր երկու բանաստեղծությունները**, որոնց հեղինակի իսկությունը խմբագիրը տեղեկանում է միայն հետո ու իմանում, որ իր սանն է:

Վահան Թեքեյանը հանձին Սյուրմելյանի տեսնում է ապագա մեր շնորհալի բանաստեղծներից մեկին և անգամ նմանություն իր ու պատանի Սյուրմելյանի բանաստեղծական զգայնությունների միջև: Սյուրմելյանը Թեքեյանի «երագած» ու այնքան տենչված տղան էր՝ իրեն հայտնված մի փոքր մեծացած: Սյուս կողմից նա հավատացած էր, որ Սյուրմելյանը իր «կարօտ ազգին» ավելին պիտի տա, քան «մեկ քանի լաւագոյններ տուած են»: Եվ հենց այս համոզմամբ Թեքեյանի հարաբերությունները աստիճանաբար խորա-

¹ Թեքեյան Վ., Ամբողջական երկեր, Գահիրե, 1949, էջ 56:

* Սյուրմելյանի այս նախասիրությունը գալիս էր նրա մորեղբորից՝ Հարությունից, ով երկրագործություն էր ուսանել Եվրոպայում, սակայն թոքախտի պատճառով կիսատ էր թողել ուսումը և վերադարձել իր գերդաստան ու կնքել իր մահկանացուն: Նա ունեցել է նաև գրական հակումներ:

** Մինչ այդ Սյուրմելյանը Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթում տպագրել էր Հայաստանում իր անցկացրած ամիսների տպավորությունները:

նում են՝ տեղիք տալով ջերմ ու սրտառուչ մի բարեկամության, որն աննախադեպ երևույթ է մեր գրական-մշակութային կյանքում և ակունքվում էր երկու կարևոր ելակետերից. Թեքեյանը Սյուրմեյանի համար ամուր հենարան էր, խորհրդատու և հայրական ամբողջ հոգատարությամբ լի անձ, ով, ի լրումն այդ ամենի, նաև մեծ բանաստեղծ էր, ուսուցիչ, ազգային գործիչ, իսկ Սյուրմեյանը Թեքեյանի համար այն անձն էր, ում մեջ նա տեսնում էր մարմնացումը իր ոչ միայն հոգևոր, այլև տենչած ֆիզիկական զավակի և որի նկատմամբ տածում էր «... հայր չեղած մարդու պահուած աղապատանք» ու «բոլորովին չանցած պատանությունն մր անուշ երազներ»¹:

Մակայն, որքան զարմանալի թվա, մամուլում արդեն տպված գործերի հեղինակ, Թեքեյանի ու Հակոբ Օշականի խրախուսանքներին արժանացած Սյուրմեյանը, ինչպես ինքն է վկայում, մտադիր չէր իր ուսումը շարունակել Կեդրոնականում և բոլորովին հավակնություն չունեի բանաստեղծ դառնալու. «Ես կուզեի մեկնիլ Ամերիկա, երկրագործական գիտության տիրանալու՝ Հայաստանի համար: ... Ես բանաստեղծ չեի»²: Չենք կարող չասել, որ իրականում Սյուրմեյանը իրոք օժտված էր բանաստեղծական շնորհով, բանաստեղծ էր իր էությամբ ու տաղանդով, բայց այդպիսին չէր իր նախասիրություններով ու նպատակներով:

Դաշնակից մեծ պետությունները քիչ-քիչ Թուրքիային էին զիջում Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով իրենց գրաված հողերը: Խուճապը հասնում է մինչև Կ. Պոլիս: Թեքեյանը Սյուրմեյանին հորդորում է չհեռանալ և շարունակել ուսումը: «Անտուն և անոթի որբ» Սյուրմեյանը ընկերների հավաքած դրամներով և Կ. Պոլսում գործող Հայ գյուղատնտեսական միության աջակցությամբ Ամերիկա մեկնող մի նավի նկուղի տոմսակ է գնում ու 1922 թ. օգոստոսին հեռանում Կ. Պոլսից:

Ավելի ուշ՝ 1922 թ. հոկտեմբերին, Սյուրմեյանին գրած նամակում Թեքեյանը նշում է, որ նա ինչ լավ արեց, որ իրեն չլսեց, քանի որ ամեն բան դեպի «գեշն» է գնում, և փախչողների ու ցրվողների թիվը աստիճանաբար աճում է:

Անկեղծությամբ ու հոգատարությամբ լեցուն և հուզականությամբ թոթովուն բարեկամության մի նոր շրջան են թևակոխում Թեքեյան-Սյուրմեյան հարաբերությունները՝ այս անգամ արդեն նամակագրության միջոցով:

Ամեն բան փոխադարձ էր: Թեքեյանը իր նամակներում ամենայն գործով Սյուրմեյանին անվանում է «սիրելի տղաս», իր աղապատանքը հայտնում, որ պիտի տաքացնի Սյուրմեյանի «մտղ սիրտը», հավաստիացնում, որ ինքը «իր ցուրտին մեջ» պետք ունի Սյուրմեյանի գործվին: Իսկ Սյուրմեյանը գրում է, որ Ամերիկայում ինքը ոչ մի մտերիմ չունի և իրեն համարում է կրկնակի որբացած, որ Թեքեյանի նամակներն իրեն շատ են օգնում ճիշտ

¹ Վահան Թեքեյանի նամակները Լեւոն-Չաւէն Սիրմէլեանին, էջ 21-22:

² Վահան Թեքեյան, Լեւոն-Չաւէն Սիրմէլեան // «Սովետական գրականություն», 1980, թիվ 6, էջ 96:

կողմնորոշվելու կյանքի հորձանուտում: Այս ընթացքում գրված երկուստեք նամակներն աչքի են զարնում ջերմությամբ ու անմնացորդ նվիրումով:

Բանաստեղծությունը՝ բանաստեղծություն, գրական շնորհը՝ շնորհ, ամրակայող հայր-զավակ հարաբերությունները՝ երկուստեք բաղձալի, բայց Սյուրմելյանի համար գոյություն ուներ մեկ այլ նպատակ, որի մասին նա երազել էր վաղուց և անելու էր ամեն ինչ՝ այն իրականացնելու համար՝ ստանալ երկրագործական հիմնավոր կրթություն ու մեկնել Հայաստան՝ այնտեղ կիրառելու իր գիտելիքները՝ ծառ տնկել հայրենի հողում ու նպաստել գյուղատնտեսության զարգացմանը: Իր նպատակին հասնելու համար նա ընդունվում է Կանգասի երկրագործական քոլեջ (հետագայում սովորել է նաև Նեբրասկալի և Կալիֆոռնիայի համալսարաններում):

Սյուրմելյանին ուղղված՝ 1922 թ. հոկտեմբերի 12 թվակիր նամակում Թեքեյանը գրում է, որ նրան ճանաչելուց հետո ինքը ունեցել է «մաքուր ու տաքացնող զգացում», մի բան, որ «վաղուց չի ունեցել», իսկ այդքան տեղին երբեք: Այդ նամակում Թեքեյանը Ամերիկյան բնութագրում է «զուտ ուժի եւ սզեղ ուժի երկաթե ու քարե զանգուած», Սյուրմելյանին խորհուրդ տալիս դիմակայել իրեն «չտեսնող» ու «տեսնել չուզող» ամբոխին, հաղթահարել բոլոր խոչընդոտները, բայց և՛ «պիտի աշխատիս, տղա ս, որ սիրտդ մնայ ինչ որ է, յիշել. յուզուիլ եւ կապուիլ գիտնալ անձերու եւ իրերու, որ ունենայ միշտ իր թաքուն պարտեզը կամ իր պզտիկ մատուռը»¹:

Իսկ Վառնայից գրված նույն թվականի դեկտեմբերի 21 թվակիր նամակում ափսոսանք է հայտնում, որ ինքը ավելի վաղ չի ճանաչել Սյուրմելյանին, այն ժամանակ, երբ «կրնայի օգտակար ըլլալ քեզի, քու մանկութիւնդ պաշտպանել, քու որբութիւնդ մեղմել, քու զրկանքդ ամոքել»²: Նամակում Թեքեյանը գրառել է նաև իր բանաստեղծություններից մեկը («Կուզեմ մեկը»), որում ոչ միայն արտահայտվում է Թեքեյան անհատի հոգեկերտվածքը, այլև սիրո նկատմամբ սիրագուրկ մարդու բաղձանքը՝ ունենալ մեկին.

*Որ փոյթ չէ, թե ինձ համար չզգայ բնաւ ոչ մէկ սէր
Բայց որ իմ սէրս գիտնայ:*

.....
*Չըսիրելով հանդերձ զիս՝ երախտագէտ ինձ ըլլայ
Ձինք սիրելոյս համար շատ.
Միրէ՛ սիրուիլը ինձմէ եւ դրնէ՛ վիզն ուսիս վրայ
Վստահութեամբ մը ազատ...:*

Դիտելի է, որ վերոհիշյալ բանաստեղծությունը որքան որ ուղղված է անհայտ «մեկին», նույնքան էլ հասցեագրված է հենց Ձ. Սյուրմելյանին, ումից

¹ **Թեքեան Վ.**, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 215: (Այս գրքից կատարված մեջբերումները այսուհետև կնշվեն միայն *Նամականի* և էջ հղումով – *Ա. Ա.*):

² Նույն տեղում, էջ 218:

Թեքեյանը ոչինչ չի ուզել, ընդամենը՝ փոխադարձ նվիրում ու, ինչպես այդ բանաստեղծությունում է ասվում, գիտենալը իր սիրո:

Սյուրմեյանն իհարկե ջերմությամբ ու պատրաստակամությամբ է ընդունել Թեքեյանի հոգու այս գեղումներն ու շռայլումները, որի դրսևորումներից մեկը նրա՝ Թեքեյանին ուղղված նամակների դիմումի ձևն է ու ստորագրությունը՝ «սիրելի հայր», «իմ սիրելի հայր», «զավակդ՝ Զավեն», «Մեծցող զավակդ՝ Զավեն», «Միրելի հայրս, մեծ եղբայրս, առաքյալս, վարպետս» և այլն¹: Պատասխանելով Սյուրմեյանի՝ իրեն ուղղված նամակներից մեկին՝ Թեքեյանը գրում է. «Ինչ բնականօրեն զաւակդ կըսես ինձի՝ որ *անոր կարօտով տուայտեր եւ օրօրուել եմ միշտ*, գիտնալով, որ գրկաբաց կընդունուիս՝ այն պատճառաւ, որ *չափազանց կը նմանիս սրտով, մտքով* ու կը խորհիմ հիմա – *կերպարանքով՝ ա՛լ անո՛ր, իմ երագիս զաւակին...*»² (ընդգծումները մերն են - Ս. Ս.):

Վերոհիշյալ բանաստեղծությունը անշուշտ Թեքեյանի կյանքի «լքումների ու յուսահատությունների» արտահայտություններից է, որ պարունակում է «Լոյս եւ ըստուեր քովէ քով» և փաստում այն միայնությունը, որի մեջ հայտնվել էին թե՛ բանաստեղծ և թե՛ մարդ Թեքեյանը:

Նույն նամակում իր այդ միայնությունը Թեքեյանը նմանեցնում է «քարանձաւի եւ աւերակի», որից ազատվելու համար ինքը պետք ունի սրտակից հոգու, որի արտահայտություններից մեկը նա իր նամակներում ու բանաստեղծություններում խտացնում է «զավակ» հասկացությամբ:

1922 թ. նոյեմբերին՝ քեմալականների մուտքից մի քանի օր առաջ, Կ. Պոլսից հեռացել էր նաև Թեքեյանը. սկզբից՝ Բուլղարիա, իսկ 1923 թ. մարտի սկզբներին՝ Հունաստան՝ Ազգային պատվիրակության հանձնաժողովի հանձնարարությամբ հունական կղզիներում ծավալելով գաղթականներին օգնություն ցուցաբերելու կարևոր գործունեություն, ուր խնդրահարույց էին մանավանդ գաղթականների սննդի, աշխատանքի, բնակության, իսկ որբերի՝ դաստիարակության, հանգստի, ազգային կրթության և արդեն չափահաս որբուհիների հետագա ճակատագրերի լուծման հարցերը:

Հունաստանում կար շուրջ 50 գաղթատեղ: Այստեղ Թեքեյանը նախաձեռնում և ստեղծում է «Հունաստանի հայ որբախնամ միությունը», դիմում-

¹ Տե՛ս **Վահան Թեքեյան**, Լևոն-Զավեն Սյուրմեյան: Տե՛ս ԳԱԹ, Վ. Թեքեյանի ֆոնդ, թիվ 175:

^{*} Այդ «նմանությունը» ոմանց կարծել է տվել, թե Թեքեյանն ու Սյուրմեյանը արյունակից հայր ու որդի են: Այս առումով Թեքեյանը իր նամակներից մեկում վկայում է, թե ինչպես Միքայել Կյուրճյանի ձեռքն ընկած Սյուրմեյանի նկարը նրան մտածել է տվել, թե վերջինս Թեքեյանի ապօրինի զավակն է՝ արդյունքը բանաստեղծի ստիպողական թափառումների: Այդ կասկածին տեղիք է տվել «Հորս՝ Վահան Թեքեյանին» մակագրությունն ու Սյուրմեյանի դիմագծերի նմանությունը Թեքեյանին:

² Նամականի, էջ 217:

ներ կատարում հունական իշխանություններին, հորդորում հայ ընտանիքներին իրենց հարկի տակ առնել անտուն հայ որբերին:

Ամերիկյան Near East Relief (Մերձավոր Արևելքի նպաստամատույց) կոչվող կառույցը, որ ստանձնել էր որբախնամ գործը և նպաստավորվում էր նաև ամերիկացի հայերի տված գումարներով, անտարբեր ու անհոգ էր մանավանդ հայ որբերի ազգային նկարագրի ձևավորման հարցերում:

Սյուրմեյանին ուղղված նամակներում որբերի կյանքին վերաբերող անդրադարձները, Թեքեյանի մտահոգությունների արտահայտումը լինելուց զատ, նաև Սյուրմեյանի վիճակում հայտնված «որբ տողոց» ընդհանրացված ներաշխարհի արտահայտումն են, դրանով իսկ՝ հենց Սյուրմեյանի համար հայ իրականության նկատմամբ ազգային նկարագիր կերտող աշխարհայացք ձևավորող: Իր նամակներից մեկում Թեքեյանը գրում է ամերիկյան որբախնամ մարմինների կեղծ ու պատիիր գործունեության մասին և պատմում Կեդրոնական վարժարանի նախկին աշակերտ մի որբի նամակի մասին, ուր վկայվում է, թե ինչպես իրենց օրերով քաղցած թողնելով՝ ամերիկացի պաշտոնյաները իրեն և իր մյուս ընկերներին «սինեմայի բռնեցին՝ հանձնարարելով պառկիլ, էլլեյ, ժպտիլ ու լողալ – մի՛ շտ անօթի»¹:

1923 թ. հուլիսի սկզբներին Թեքեյանը մեկնում է Աթենքից: Նույն ամսի կեսերին նա արդեն Ալեքսանդրիայում էր: Շուտով մեկնում է Փարիզ, կուսակցական գործերով լինում Լիբանանում, Ժնևում, Ալժիրում... Այս ժամանակաշրջանում Թեքեյանը իր մի շարք նամակներում Սյուրմեյանին է ուղարկում նաև իր նոր գրած մի քանի բանաստեղծությունները, որոնց հիմնական նպատակը ոչ այնքան Սյուրմեյանի կարծիքը իմանալն էր, որքան Սյուրմեյանի մեջ գրական հետաքրքրությունների բորբոքումն ու խթանումը:

Թեքեյանի փայփայած ծրագրերից մեկը Հունաստանում և Սիրիայում ապաստանած որբերին Հայաստան տեղափոխելն էր, այլապես «անոնք կ'սպառին եւ կը փճանան»: Նա արդեն երկու անգամ առիթ էր ունեցել լինել Հայաստանում: Առաջին անգամ 1911 թ. որպես եգիպտահայոց կողմից ընտրված պատվիրակ նա մասնակցեց Էջմիածնում կայացած Գևորգ Ե կաթողիկոսի ընտրություններին և Հայաստանից ստացած տպավորությունների տակ գրեց «Արարատյան դաշտին մեջ» բանաստեղծությունների շարքը, որը ձոնեց Լևոն Բաշայանին: Երկրորդ այցելությունը կապված է 1919 թ. թուրքահայերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ բանակցություններ վարելու Ազգային պատվիրակության ներկայացուցչի գործընթացի հետ: Ասենք, որ Թեքեյանը միշտ էլ փայփայել է Հայաստանում ապրելու ու ստեղծագործելու երազանքը և աշխատել նաև Սյուրմեյանի մեջ բորբոք պահել այդ ցանկությունը: Այսպես՝ 1924 թ. դեկ-

¹ Նույն տեղում, էջ 534:

տեմբերին Սյուրմեյանին նա գրել է. «Կոստան Զարեանը հոս է (Փարիզում – *Ա. Ա.*), Հայաստանէն եկած (Զարյանը Հայաստանից հեռացել է 1924 թ. ամռան վերջերին և սկզբնական շրջանում ներկայանում էր որպէս Լուսժողովուրդի և ՀՕԿ-ի ներկայացուցիչ – *Ա. Ա.*) ... ըսի որ կը մտածէիք, դուն ու Վահրամը (խոսքը բանաստեղծ Վահրամ Կաքավյանի մասին է, ով Կ. Պոլսի Կեդրոնականի սաներից էր, և ում Թեքեյանը շատ է օգնել կրթություն ստանալու գործում – *Ա. Ա.*) Հայաստանի մէջ ազարակ մը ունենալ տպարանի մը եւ ինձի հետ. հավաստեց, որ ամէն դիրքերին կուտայ կառավարութիւնը: Քանի մը օր առաջ տեսայ նաեւ Երկլրագործության] Կոմիսար Արամայիս Երզնկեանը: Հայաստան կը հրաւիրեն, *բայց առանց քեզի չեմ երթար*»¹ (ընդգծումը մերն է – *Ա. Ա.*): Հայաստանի վերաբերյալ Թեքեյանի ծրագրերը շատ ավելի մեծ են եղել, որը համահունչ էր այդ ժամանակ գործող «Հայոց խորհրդակցական խառը համաժողովի» ծրագրերին՝ Սիրիայից, Հունաստանից, Բուլղարիայից և հայաշատ այլ բնակավայրերից Հայաստան տեղափոխել 50 հազար գաղթականների:

Ելնելով բոլշևիկյան դիրքերից՝ Ալեքսանդր Մյասնիկյանն ու Արտաշես Կարինյանը այս ընթացքում Ռամկավար ազատական կուսակցության դեմ մի քանի ելույթներ ունեցան, որն ինքնին ուղղվեց նաև Թեքեյանի դեմ, քանի որ նա, ինչպէս նշվեց, այդ կուսակցության օրգան «Ժողովրդի ձայնը» թերթի խմբագիրն էր: Ուստի Հայաստան մեկնել հնարավոր չեղավ: Մնում էր սպասել ավելի բարենպաստ ժամանակների: 1925 թ. Սյուրմեյանը արդեն հասցրել էր ավարտել երկրագործական քոլեջը, ինչ-որ գրություններ տպագրել անգլերենով՝ ավելի ու ավելի թափանցելով ամերիկյան կյանքի մեջ: Ճիշտ է, Թեքեյանին նա ավելի հազվադեպ էր գրում, բայց դեռ շարունակում էր իր նվիրումները հայտնել նրան: Վերոհիշյալ նամակից անց՝ 8-ը նոյեմբերի 1925 թվակիր նամակում, Թեքեյանը գրում է Սյուրմեյանին, որ իր անմնացորդ պատրաստակամության փոխարեն ինքը որևէ երախտագիտության չի սպասում, որ ինքը բավարարված է «մտերիմ տղու» այն զգացմամբ, որ տածում է Սյուրմեյանը իր նկատմամբ. «Ես շատ եմ մինակ, միշտ մինակ ապրած: Այլ յոյս չունեի՝ թէ կրնայ փոխուիլ ատիկա: Ներսէն փտորելով՝ դուրսէն կը կարծրանայի հետզհետէ: ... *Այդ յոյսը տուիր դուն ինձի եւ քեզմով եւ մօտեցայ նորէն կեանքին*»² (ընդգծումը մերն է – *Ա. Ա.*):

Այդ նույն նամակում Թեքեյանը արտահայտում է նաև իր հրճվանքը՝ կապված Հայաստան գնալու նոր հնարավորության հետ. «Քեզ Հայաստան կը հրաւիրեն և արդէն: Ի՞նչպէս: Ուրեմն կերթանք կոր, ե՞րբ: Ու չմոռնա՛ս ըսելու՝ թէ հետո՞ մէկը պիտի առնես Եգիպտոսէն, որ ոչ ոքի թշնամի է այնտեղ եւ ամէն պարագայի մէջ շատ բարեկամ է հայ երկրին ու ժողովրդին»³:

¹ Նույն տեղում, էջ 276:

² Նույն տեղում, էջ 284:

³ Նույն տեղում, էջ 286:

«Ամեն պարագայի մէջ» ասելով՝ Թեքեյանը նկատի ունէր երկրի խորհրդայնացումը, որի կողմնակիցը չէր ինքը և այդ հարցում ունէր իր պատկերացումները, բայց երկիրը երկիր էր մնում, ու ժողովուրդը՝ ժողովուրդ, որոնց և «շատ բարեկամ» էր ինքը միշտ: Բայց այս անգամ էլ վիճակված չէր իրականացնել այդ մեկնումը: Պատճառներից մեկը Սյուրմեյանի թոքերի սուր հիվանդությունն էր:

1926 թ. հունվարին գրված նամակում Թեքեյանը տեղեկացնում է Սյուրմեյանին, որ ինքը պատրաստվում է որպէս նոր կազմված խնամակալության ներկայացուցիչ Կիպրոս մեկնել՝ այնտեղ նոր բացվող Մելքոնյան որբանոցում աշխատելու: Այդ նամակում Թեքեյանը հույս է հայտնում, որ ինքը հնարավորություն պիտի ստանա գրականությամբ զբաղվելու ու հանդես հրատարակելու. «Եթէ ասիկա ըլլայ եւ եթէ շուտով, ինչպէս կը յուսամ, առողջանաս, տարիէ մը հոս կուգաս՝ Հայաստան երթալէ առաջ, կը մնաս տարի մը – երկու, հոն հաւաքուելիք հինգ հարիւր տղոց եւ ինծի հետ. անոնց քու հոգիդ կը ներշնչես եւ յետոյ, միասին, կերթանք Հայաստան՝ հոն մեծ եւ պզտիկ տղոց մէջ աշխատելու, անոնցմէ առնելու եւ անոնց տալու՝ համար մեր լաւագոյնը: Իր հողին վրայ. ամենուրեք իրեններու միայն հանդիպելով՝ մարդ, կը հաւատամ, թէ իր կրցածին լաւագոյնն ու մեծագոյնը կուտայ...»¹:

Թէ՛ Սյուրմեյանը և թէ՛ Թեքեյանը, որ 1935 թ. ևս Հայաստանի իր բարեկամ շրջանակներից (Զապել Եսայան և այլք) հրավերներ ստացավ, միասին Հայաստան գալու հնարավորություն չունեցան ու հայրենի անդաստաններում չտնկեցին ո՛չ ծառ և ո՛չ «իրենց կրցածը» կարողացան իրականացնել:

Թեքեյանի նամակներում, բանաստեղծություններում և անգամ բանաստեղծությունների վերնագրերում օգտագործված «տղա» հասկացությունը, որ նրա ընկալմամբ մարմնավորումն է ներկայի, հույսը վաղվա, ինչպէս նաև «Երկրի խորհուրդն, երկնի երազն անսահման»², յուրովի բնութագիր է նաև իրեն՝ Թեքեյանին: Սյուրմեյանին ուղղված մի նամակում նա գրում է. «Այնչափ աւելի կարծենք իբրեւ մարդ, որչափ իբրեւ տղայ զգալու մեր յատկութիւնը կորսնցուցած չենք ամբողջապէս: Բանաստեղծը, ամենէն շատ, տղայ ու տղայ կը մնայ մինչեւ իր ճերմակ մազերուն տակ, տղայ՝ նոյնիսկ քերթուածներ գրելու իր յամառ միամտութեանը մէջ. Տղայ՝ ինքզինք պատկերներով եւ ձայնաւորներով խաբելու իր սովորութեամբ»³ (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Հասկանալի է, որ Թեքեյանը այս տողերում նկատի ունի ստեղծագործողի մէջ երիտասարդ ոգու ու անարատության հարատւության անհրաժեշտությունը, բայց չմոռանանք, որ այս նամակը ուղղված էր հենց Սյուրմեյանին, ում նա համարում էր իր «տղան»՝ «զավակը»:

Թեքեյանի բանաստեղծական աշխարհի տիրապետող թեմաներից մեկը

¹ Նույն տեղում, էջ 292:

² Տե՛ս Թեքեյանի «Ես կը սիրեմ» բանաստեղծությունը:

³ Նամականի, էջ 260:

չունեցածի բաղձանքն ու որոնումն է, որի դրսևորումներից են նաև նրա՝ հոգևոր ու մարմնավոր *զավակին* նվիրված մի քանի քերթվածներն ու արտահայտությունները, որոնցից մի մասում որպես բանաստեղծության «բնորդ» ըստ երևույթին նկատի է ունեցել նաև հանդիպելիք պատանին, որը իրականություն դարձավ հանձին Սյուրմելյանի:

Թեքեյանը «Չավակս» վերնագրով երեք բանաստեղծություն ունի գրած:

Առաջին բանաստեղծությունն արձանագրումն է ընտանիք, կին ու երեխաներ չունեցող Թեքեյանի մեջ բորբոքվող տենչի, որը հար անբաժան պիտի մնար նրանից.

*Ուզեցի անգուսպ քեզ իբրև կորյուն՝
Իմ փափագներէս, ցասումէս ծնած,
Որպեսզի գոչեմ սրտես «Հաղթություն՝ն»,
Երբ որ թարթափին աչքերս քնեած:*

Բանաստեղծությունը գրվել է 1901 թ. և զետեղվել Թեքեյանի՝ 1914 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Հրաշալի Յարութիւն» գրքում: Թեքեյանը իր «զավակին» պատկերացնում է որպես ուժի և շնորհների կրող անձ, ով սեզ է ու սիրված ամենքից, բայց մանավանդ մեկը, ում միջոցով պիտի ճանաչեն նաև իրեն.

*Եվ մեծնա հասակդ ամբոխին վերև,
Եվ երգեն անունդ միաբերան,
Ու ճանչնան զիս վրադ, որդի՛ս աննման...:*

Սա հենց այն հոգեվիճակն է, որ արդեն պատրաստի հող էր ստեղծում հոգեզավակ մեկին իր կողքին ունենալու համար: Երիտասարդ Սյուրմելյանին ոգևորել ու օգնել են ոչ միայն Թեքեյանի գրած նամակները, այլև նրա հին ու նոր բանաստեղծությունները: Վահան Թեքեյանի մասին գրած իր անգլերեն հոդվածում* Սյուրմելյանը վկայում է, որ իր հետ Ամերիկա է տարել նրա «Հրաշալի հարություն» և «Կես գիշերեն մինչև արշալոյս» գրքերը, որոնք մակագրված էին հեղինակի կողմից: Թեքեյանին ուղղված 2-ը նոյեմբերի 1922 թվակիր նամակում, խոսելով Ամերիկայում իր ծանր կացության մասին, Սյուրմելյանը գրում է. «Հուշատետրիս մեջ արձանագրած եմ տված գրքերեդ կտորներ ու աղոթագրքի մը նման հետս կպտտեցնեմ զայն: Երբ տրտում եմ կամ ձախողության մը համար քիչ մը հուսահատիմ, անմիջապես կբանամ հուշատետրս ու կկարդամ, անկուշտ կկարդամ, մինչև որ հոգիս բացվի: *Մանավանդ երկու «Չավակս»-ները ինձի այնքա՛ն ուժ կուտան, այնքա՛ն, այնքա՛ն իսանդավառություն...»¹ (ընդգծումը մերն է – Ա. Ա.):*

Երկրորդ բանաստեղծությունը, որ Թեքեյանը զետեղեց 1919 թ. Փարիզում

* Տե՛ս Վահան Թեքեյան, Լևոն-Չավեն Սյուրմելյան, էջ 96-107:

¹ Լույս տեղում, էջ 101:

լույս տեսած իր «Կէս գիշերէն մինչեւ արշալոյս» գրքում, գրել է 1914 թ., երբ ինքը 36 տարեկան էր և իրեն, ինչպէս այդ բանաստեղծությունում է բնութագրում, արդէն համարում էր «զիս իմ մէջս» չարաչար սպանված: Բանաստեղծությունը արտահայտում է Թեքեյանին այնքան հատկանշական գալիքի մեջ շարունակվելու բաղձանք՝ իրեն նեցուկ գավակի միջոցով.

*Երբ ես ծրոյիմ՝ ան բարձրանա՛ր քովս ի վեր,
Իմ սպառած կեանքիս հիւթովն առլըցուկ.
Ե՛ս հովանի անոր եւ ա՛ն ինձ նեցուկ,
Ու նո՛ր արեւ՝ աչքին մէջ աչքըս գոցուէր...*

Բանաստեղծության գրության տարին՝ 1914 թ., արդէն վկայում է, որ այս քերթվածը կապ չունի Սյուրմեյանի հետ: Բայց այն փաստում է հոգեկան հենց այն պարապը, զգայական այն բաղձանքը, որը 1920-ական թվականների սկզբին լցվել է Սյուրմեյանի անձով՝ բառ առ բառ արձանագրելով հոր ու գավակի այն ցանկալի փոխհարաբերությունը, որ ծնվելու էր նրանց միջև՝ «Ես հովանի անոր եւ ա՛ն ինձ նեցուկ»:

Երրորդ բանաստեղծությունը Թեքեյանը գրել է 1926 թ., ստույգ ամիսը հայտնի չէ: Սակայն դատելով բանաստեղծության չորրորդ տնից՝ այն ուղղակիորեն առնչվում է Թեքեյանի կյանքից Սյուրմեյանի «իսպառ» մեկնած լինելուն, հասկանալի է՝ բանաստեղծական ուրույն ընդհանրացմամբ: Այդ «մեկնած լինելը» կարելի է նաև ընկալել որպէս բանաստեղծի մեջ գավակի նկատմամբ տաժած զգացումի ու տենչի մարում-սպառում: Ստույգ է, որ այստեղ գործել են թե՛ կոնկրետ անձնավորումը և թե՛ բանաստեղծական ընդհանրացումը:

Եթե բանաստեղծության առաջին տունը արձանագրում է զարմանք գավակի նկատմամբ ունեցած այդքան մեծ սիրո, իսկ երկրորդ տունը՝ հաստատում, որ այդ սերը ավելի խորն էր, քան ուրիշների և անգամ ծնողների նկատմամբ սերը, ապա երրորդ տունը արդէն իրական հոգի ու մարմին առած գավակի հաստատումն է, որը, սակայն, այլևս անցյալ է.

*Ա՛հ, իմ տղա՛ս որ կապրեր ատեն մ՛այնքան ինձ մոտիկ,
Հիմա մեկնե՛ր է իսպառ, ու ամպերուն մեջ երբեմն,
Անցնող ճերմակ ամպերուն, ես զինքը դեռ կգտնեմ...*

Մի կողմ թողնելով այս բանաստեղծության մեջ առկա ուղղակի ակնարկումները՝ ասենք, որ եթե առաջին երկու բանաստեղծությունները այս կամ այն չափով բացահայտում էին Թեքեյանի հոգեկան տվայտանքները և արտահայտում բանաստեղծի մեջ ծնված հայրական ու ծնողական ցանկությունները, ապա երրորդ բանաստեղծությունը զանցումն է այդ ամենի, զանցումը դեռևս մանկությունից եկող այն սիրո, որ, բանաստեղծի խոսքերով ասած, «ինձմէ դէպի ինձ կընէր շրջան մը անծայր»:

(Շարունակությունը հաջորդ համարում)